

## ԱՆՉԱՓԱՏԱՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ԲՈՆԻՒ ՄԵՌԱԿԱՆ ՏԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՎ ԿՈՂՄԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՏԻՄՆԱՏԱՐՑԵՐ

Քրեական իրավունքի տեսության մեջ արմատավորված մոտեցման համաձայն՝ յուրաքանչյուր հանցագործություն բաղկացած է օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի և հատկանիշների ամբողջությունից<sup>1</sup>: Հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները վերաբերելի են միևնույն երևույթին՝ հանցագործությանը, սակայն առաջինները նկարագրում են գործընթացներ, որոնք տեղի են ունենում օբյեկտիվ, առկա իրականության մեջ, այսպես ասած՝ «նյութական աշխարհում», իսկ երկրորդները՝ գործընթացներ են, որոնք կապված են անձի, նրա ներաշխարհի, գիտակցության և կամքի հետ:

Հանցակազմի օբյեկտիվ կողմը, ավելի քան հանցակազմի մյուս տարրերը, արտացոլում է ցանկացած հանցագործության էությունը՝ բացահայտելով դրան ներհատուկ առանձնահատկությունները<sup>2</sup>:

Վ. Ն. Կուրյայվցերը նշում է, որ հանցագործության օբյեկտիվ կողմը հանցագործության օբյեկտի դեմ ուղղված հանրավտանգ վարքագծի արտաքին դրսևորում է, այսինքն՝ կամային վարքագծի ակտ է, որն իրագործվում է օբյեկտիվ իրականության մեջ և արտահայտվում է օրենքով՝ պաշտպանվող հասարակական հարաբերություններին վնաս պատճառելով կամ այդպիսի վնասի առաջացման սպառնալիքով<sup>3</sup>: Այս բնորոշումը, կարծում եմ, հաջողված է և առավել ամբողջական և հստակ ամրագրում է հանցագործության օբյեկտիվ կողմի էությունը:

Մինչ անչափահասների նկատմամբ

կատարվող բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ կողմի առանձնահատկությունների ուսումնասիրությունը՝ անդրադառնանք բռնի սեռական հանցագործությունների օբյեկտիվ կողմի ընդհանուր բնութագրին:

ՀՀ քր. օր. հոդված 138-ը պատասխանատվություն է նախատեսում բռնաբարության համար: Սույն հոդվածի առաջին մասով բռնաբարությունը բնորոշվում է որպես՝ տղամարդու սեռական հարաբերություն կնոջ նկատմամբ՝ նրա կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով:

Բննարկվող հոդվածով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի բովանդակությունը բավականաչափ հստակ է և քրեական իրավունքի տեսության մեջ վեճերի առարկա չի հանդիսանում: Սեռական հարաբերություն ասելով ընդունված է հասկանալ տղամարդու և կնոջ միջև հետերոսեքսուալ հարաբերությունը, այսպես կոչված՝ բնական եղանակով<sup>4</sup>: Նման սեռական հարաբերությունը կարող է հղիություն առաջացնել, իսկ սեռական կրքերի բավարարման այլ եղանակները համարվում են ածանցյալ, սուտոգատ եղանակներ<sup>5</sup>: Սեռական հարաբերությունը՝ որպես նորմալ ֆիզիոլոգիական ակտ կարող է տեղի ունենալ բացառապես տղամարդու և կնոջ միջև, իսկ մնացած բոլոր սեռական բնույթի գործողությունները, որոնք ուղղված են սեռական կրքերի բավարարմանը չեն կարող համարվել սեռական հարաբերու-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



թյուններ<sup>6</sup>:

ՀՀ քր. օր. հոդված 139-ը պատասխանատվություն է նախատեսում սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար: Սույն հոդվածի առաջին մասն ունի հետևյալ դիսպոզիցիան՝ սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

Ինչպես տեսնում ենք, օրենսդիրը չի սահմանել որևէ կոնկրետ չափանիշ, որով հնարավոր կլիներ հստակ կողմնորոշվել, թե ի՞նչ արարքների մասին է խոսքը, ինչո՞վ են այդ արարքները միմյանցից տարբերվում և ինչպե՞ս պետք է տարբերակել սեռական բնույթի բռնի գործողությունները բռնությամբ զուգորդված անառակաբարո գործողություններից, հատկապես այն դեպքերում, երբ սեռական բնույթի բռնի գործողությունները կատարվում են անչափահասների կամ մանկահասակների նկատմամբ: Այս իրավական անորոշությունն առաջացնում է տեսական բազմաթիվ վեճեր և քննարկումներ՝ խոչընդոտելով նաև հանցագործությունների որակման գործընթացին և իրավակիրառ գործունեության արդյունավետ իրականացմանը:

Համասեռական գործողությունների, ինչպես նաև սեքսուալ բնույթի գործողությունների հասկացություններին անդրադառնում են սեքսուոլոգիայի և սեքսուալ-տոլոգիայի գիտությունները<sup>7</sup>:

Համասեռամոլությունը սեռական շեղում է, որի էությունը միևնույն սեռի ներկայացուցչի նկատմամբ սեռական հակումներ ունենալն է: Սրա դրսևորման ձևերից են արվամոլությունն ու լեսբոսությունը: Արվամոլությունը չի ընդգրկում տղամարդկային համասեռամոլության բոլոր դրսևորումները: Տղամարդկանց միջև այլ եղանակներով իրականացվող սեռական հարաբերությունները (ձեռնա-

շարժությունը, սեռական ակտի ձևացումը և այլն) արվամոլություն չեն համարվում: Դրանք սեքսուալ բնույթի այլ գործողություններ են: Լեսբոսություն ասելով՝ սույն հանցակազմի իմաստով, պետք է հասկանալ սեռական հարաբերությունների ոլորտում կնոջ բռնի շփումը կնոջ հետ՝ սեռական օրգանների, ձեռքերի և մարմնի այլ մասերի օգտագործմամբ: Քննարկվող հոդվածի իմաստով սեքսուալ բնույթի այլ գործողություններ են համարվում տղամարդու կողմից կնոջ կամ մեկ այլ տղամարդու (բացի արվամոլությունից), ինչպես նաև կնոջ կողմից տղամարդու նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի ցանկացած բռնի գործողություն, որի միջոցով հանցավորն իր սեռական կրթերին հագուրդ է տալիս խաթարված ձևով: Ենթադրվում է, որ կնոջ կողմից կնոջ նկատմամբ կատարվող սեքսուալ բնույթի բռնի գործողությունները միշտ համարվում են բռնի լեսբոսություն: Սեքսուալ բնույթի այլ գործողություն է համարվում նաև կնոջ կողմից բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, կամ անօգնական վիճակը օգտագործելով՝ տղամարդու հետ բնական եղանակով իրականացված սեռական հարաբերությունը: Ասվածից հետևում է, որ նշված հոդվածով նախատեսված հանցագործությունից տուժող կարող է դառնալ ցանկացած սեռի ներկայացուցիչ<sup>8</sup>:

Տեսության մեջ տրվել են սեքսուալ բնույթի գործողությունների այլ դասակարգումներ ևս: Այսպես՝ Ա. Ն. Կրասիկովը սեքսուալ բնույթի գործողությունների շարքում բացի վերը թվարկվածներից, նշում է նաև «նարվասադատան», «վիկհարիտան», սեռական հարաբերության ձևացումը և այլն<sup>9</sup>: Սակայն, ինչպես տեսնում ենք, հեղինակը ևս հստակ տարբերիչ առանձնահատկություններ չի նշում և ընդհանրական ներկայացնում է այդ գործողություններից որոշները: Այս դասակարգման հիման վրա գրեթե անհնարին է սեքսուալ բնույթի գործողությունները

տարբերակել միմյանցից կամ անառա-  
կաբարո գործողություններից:

Տեսության մեջ առկա են համանման  
դասակարգումներ, որոնք աչքի են ընկ-  
նում նշված գործողությունների առավել  
հանգամանալից թվարկմամբ: Այսպես՝  
որոշ տեսաբաններ առանձնացնում են  
սեքսուալ բնույթի գործողությունների  
հետևյալ ձևերը՝

- 1) օրալ (coitus per os),
- 2) կունիլինգուս (լատ. gonnug – կա-  
նացի սեռական օրգաններ, lingo  
- լիզել),
- 3) անալ (coitus per anum),
- 4) լեսբոսական սեր,
- 5) սեքսուալ սադիզմ (ինտենսիվ,  
բազմակի գործողություններ,  
որոնք ցավ, տառապանք են պատ-  
ճառում սեռական զուգընկերոջը  
կամ նսեմացնում, ստորացնում են  
նրան, դրանով իսկ բավարարելով  
սեռական կրքերը),
- 6) սեքսուալ գործողությունների այլ  
տեսակներ<sup>10</sup>:

Նմանատիպ դասակարգումներ տա-  
լիս են նաև Լ. Գ. Գաուլսմանը<sup>11</sup>, Վ. Վ.  
Մերկուրևը<sup>12</sup> և այլոք, սեքսուալ բնույթի  
գործողությունների շարքում նշելով նաև  
տղամարդկանց միջև տեղի ունեցող միջ-  
կոնքային կոիտուսը<sup>13</sup>:

Ն. Ն. Իգոտովը քննարկվող խնդրի  
կապակցությամբ նշում է, որ քրեաիրա-  
վական նշանակություն ունեն սեքսուալ  
բնույթի, այդ թվում՝ համասեռական այն  
գործողությունները, որոնք զուգորդվում  
են ներթափանցմամբ: Ընդ որում՝ ներ-  
թափանցումը պետք է կապված լինի սե-  
ռական կրքերի բավարարման հետ, այ-  
լապես ցանկացած իր տուժողի մարմնի  
որևէ խոռոչ մտցնելը չպետք է դիտարկվի  
որպես սեքսուալ բնույթի գործողություն-  
ներ: Հեղինակը դեմ է, որպեսզի բռնի էքս-  
հիբիցիոնիզմը, անանիզմը և այլ սեքսուալ  
գործողությունները, որոնք կապված չեն  
ներթափանցման հետ, որակվեն որպես  
սեքսուալ բնույթի բռնի գործողություն-

ներ<sup>14</sup>:

Այս կապակցությամբ քննարկենք  
հետևյալ իրավիճակը:

ԵՄԳ/063/01/14 քրեական գործով<sup>15</sup>  
Ն. Ո.-ին մեղադրանք է առաջադրվել  
այն բանի համար, որ նա 23.04.2014 թ.  
ժամը 23.30-ի սահմաններում Օգանովի  
77 շենքի մոտ՝ բռնություն գործադրելով  
անչափահաս Լ. Ս.-ի նկատմամբ և տա-  
լով բռնության գործադրման սպառնա-  
լիք, Լ. Ս.-ի կամքին հակառակ սեքսուալ  
բնույթի գործողություններ է կատարել  
նրա նկատմամբ: 2014 թվականի ապրի-  
լի 25-ին ՀՀ ոստիկանության Մալաթի-  
այի քննչական բաժնի ավագ քննիչ, ոս-  
տիկանության կապիտան Գ. Մադոյանը  
(այսուհետև՝ քննիչ) որոշում է կայացրել  
ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվա-  
ծի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 16121214  
քրեական գործը հարուցելու, վարույթ ըն-  
դունելու մասին՝ Ն. Ո.-ի կողմից անչա-  
փահաս Լ. Ս.-ի նկատմամբ նրա կամքին  
հակառակ սեքսուալ բնույթի բռնի գործո-  
ղություններ կատարելու դեպքի առթիվ:  
Այսպես, 2014 թվականի ապրիլի 23-ին՝  
ժամը 2330-ի սահմաններում, Երևան քա-  
ղաքի Մալաթիայի տոմսավաճառի հետ-  
նամասում նկատելով անչափահաս՝ 1997  
թ.-ի ծնված Լ. Ս.-ի, Ն. Ո.-ն հետապնդել  
է նրան: Օհանովի 77 շենքի մոտ գտնվող  
երկու ավտոտնակների արանքում Ն.  
Ո.-ն հասել է Լ. Ս.-ին, բռնել նրա ձեռքից  
ու բերանից, զցել գետնին և Լ. Ս.-ի կամ-  
քին հակառակ նրա նկատմամբ կատա-  
րել սեքսուալ բնույթի գործողություններ,  
այն է՝ ձեռքը հագուստի տակ անցկաց-  
նելով շոշափել է Լ. Ս.-ի կուրծքը: Լ. Ս.-ն  
օգնություն է կանչել ու դիմադրել, իսկ Ն.  
Ո.-ն սպառնացել է, որ չլռելու դեպքում  
դանակով կհարվածի, ապա, նրա դի-  
մադրությունը հաղթահարելով, մի ձեռքով  
փակել է նրա բերանը, իսկ մյուս ձեռքով  
շոշափել է վերջինիս հեշտոցի շրջանը, իր  
գործողություններով Լ. Ս.-ին պատճա-  
ռելով առողջությանը թեթև վնասի հատ-  
կանիշներ չպարունակող մարմնական



վնասվածքներ՝ ստորկզակային շրջանի ճանկավածք և պարանոցի շրջանի արյունազեղում, որից հետո, լսելով օգնության եկող Լ. Ս.-ի մայրիկի՝ Ա. Թ.-ի ձայնը՝ դիմել է փախուստի: Դատարանը Ն. Ո.-ին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 139-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝ ազատազրկման ձևով...:

Ինչպես նկատում ենք, անձի արարքը որակվել է որպես ավարտված սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարում անչափահասի նկատմամբ, մինչդեռ այս որակումը, կարծում են, այնքան էլ ճիշտ և հիմնավորված չէ: Այստեղ մենք գործ ունենք բռնի անառակաբարո գործողությունների կատարման հետ, իսկ այլ ապացույցների առկայության պարագայում արարքը կարող էր որակվել որպես անչափահասի դեմ ուղղված սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարման փորձ, բայց ոչ ավարտված սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմով:

Այս հիմնախնդրի կապակցությամբ որոշ տեսաբաններ նշում են, որ սեքսուալ բնույթի գործողությունների հստակ տեսակների և դրանց տարբերիչ առանձնահատկությունների բացակայությունը կարող է հանգեցնել այս գործողությունների շրջանակի չափազանց լայն ընկալման, որն էլ քրեական օրենքի մեկնաբանությունը կվերածի Կամասուտարայի վերաիրատարակության կամ սեքսուոլոգիայի դասագրքի<sup>16</sup>:

Շատ ավելի որոշակի և որակման առումով դյուրին մոտեցում է, երբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ են որակվում միայն այն արարքները, որոնք կապված են տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցման հետ: Իհարկե, սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունների շրջանակի նման ներդրումը կարող է քննադատվել այլ տե-

սաբանների կողմից, քանզի էականորեն նվազեցնում է քրեական ռեպրեսիայի շրջանակը, սակայն նման ձևակերպումը, որն, ընդ որում, հատուկ է նաև արտասահմանյան քրեական օրենսդրությանը (Նիդերլանդների քր. օր., Ֆրանսիայի քր. օր., Շվեդիայի քր. օր. և այլն), կարող է հստակեցնել քննարկվող իրավական նորմը, ապահովել իրավական որոշակիության սկզբունքի կենսագործումը և նպաստել այս հանցատեսակի և անառակաբարո գործողությունների տարբերակմանը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը, առաջարկում են ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 139-ը վերախմբագրել հետևյալ կերպ՝ «Սեքսուալ բնույթի, այդ թվում՝ համասեռական գործողությունները, որոնք զուգորդվել են տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ և կատարվել են տուժողի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու՝ վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»:  
Միևնույն ժամանակ, առաջարկում են նախատեսել բռնի անառակաբարո գործողությունների առանձին հանցակազմ, որի տուժողների շրջանակը չպետք է սահմանափակվի բացառապես անչափահասներով, ինչպես նախատեսված է առկա իրավակարգավորմամբ (ՀՀ քր. օր. հոդված 142):

Օրյեկտիվ կողմից բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները կարող են դրսևորվել բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով: Որպես անառակաբարո գործողությունների ծանրացնող հանգամանք՝ նախատեսված է բռնության գործադրումը կամ դրա գործադրման սպառնալիքը (հոդված 142-ի երկրորդ մասի առաջին կետ): Այս ծանրացնող հանգամանքի նախատեսումը

թույլ է տալիս անառակաբար գործողությունների նշված որակյալ հանցակազմը դիտարկել անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունների համատեքստում: Ընդ որում, բռնության կամ դրա գործադրման սպառնալիքի պարագայում արարքը կատարվում է տուժողի կամքին հակառակ, այլապես գործ կունենանք սադոմազոֆիստական վարքագծի դրսևորումների հետ:

Բռնաբարության օբյեկտիվ կողմի դրսևորման առաջին երկու եղանակները ենթադրում են տուժողի կամ այլ անձանց նկատմամբ բռնի ներգործություն: Բառի ծագումնաբանական իմաստով «բռնություն» ասելով հասկացվում է ուժի ապօրինի կիրառում, անձի նկատմամբ որոշակի ներգործություն, որը կատարվում է նրա կամքին հակառակ<sup>17</sup>: Ինչպես նշում են Ա. Ի. Մարցևը և Ա. Վ. Իվաշչենկոն՝ իրավական իմաստով բռնություն ասելով պետք է հասկանալ ակտիվ գիտակցված գործունեություն, որն ուղղված է ընդդեմ անձի ազատ կամարտահայտության: Ի տարբերություն մարդկային վարքագծի այլ տեսակների, բռնություն դրսևորելու պարագայում անձի գործունեությունն ուղղված է այլ անձի ազատության ճնշմանը<sup>18</sup>: Գ. Նյուտոնը նշում է, որ բռնության գլխավոր էությունն այն է, դրա գործադրմամբ մարդուն ստիպում են իրեն պահել այնպես, ինչպես ինքը չէր ցանկանա<sup>19</sup>: Ս. Վ. Առաքելյանն առաջարկում է քրեական օրենքում սահմանել հանցավոր բռնության հասկացությունը, որպես այլ անձի նկատմամբ դիտավորյալ, հանրորեն վտանգավոր, հակաիրավական ֆիզիկական կամ հոգեկան ներգործություն, որը կատարվում է տուժողի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով և պատճառում է կամ կարող է պատճառել վնաս մարդու իրավունքներին, օրինական շահերին, հասարակությանը կամ պետությանը<sup>20</sup>:

Սույն գիտական հոդվածի շրջանակում մեր առջև խնդիր չենք դրել ու-

սումնասիրելու բռնության քրեաիրավական հասկացությունը, որը, կարծում են, առանձին հետազոտության առարկա է, և, այս առումով, գերծ կմնանք տրված բնորոշումներին գնահատականներ տալուց և դրանք վերլուծելուց: Ավելին՝ տրված բնորոշումները սկզբունքային հակասություններ չեն պարունակում և կարող են օգտագործվել որպես քննարկվող հանցատեսակների վերլուծության անհրաժեշտ և բավարար ելակետեր:

Այս համատեքստում բռնությունը կնոջ ցուցաբերած դիմադրությունը ճնշելու, հաղթահարելու, ինչպես նաև նրան օգնության կանչելու հնարավորությունից զրկելու նպատակով տուժողի կամ այլ անձանց (օրինակ՝ նրա մերձավորների) նկատմամբ ֆիզիկական ուժ գործադրելն է՝ տուժողի ձեռքերը կամ ոտքերը կապելը, նրան ցավ պատճառելը, ծեծելը, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ պատճառելը և այլն<sup>21</sup>:

Բռնություն գործադրելու սպառնալիքն արտահայտվում է նրանում, որ հանցավորը, կնոջ կամքին հակառակ, նրա հետ սեռական հարաբերության մեջ է մտնում՝ նրա կամ այլ անձի նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով տուժողի դիմադրությունը հաղթահարելով: Իր նպատակաուղղվածությամբ և ինտենսիվությամբ սպառնալիքը պետք է հավասարագոր լինի անհաղթահարելի ֆիզիկական ուժի գործադրմանը: Այսինքն՝ սպառնալիքի գործադրման հետևանքով տուժողը պետք է հայտնվի անելանելի վիճակում, ստիպված լինի անձնատուր լինել հանցավորին, կատարել սեռական հարաբերության մեջ մտնելու նրա պահանջը<sup>22</sup>:

Լ. Ա. Անդրեևան նշում է, որ սպառնալիքը պետք է լինի անմիջական և գոհի մոտ ստեղծի անելանելիության վիճակ, քանզի եթե վերջինս հրաժարվի սեռական կապի մեջ մտնել հանցավորի հետ, նշված սպառնալիքը կարող է անմիջապես ի կատար ածվել: Սպառնալիքը պետք է ունե-



նա ինտենսիվ բնույթ, որպեսզի տուժողը գիտակցի, որ հրաժարման դեպքում ֆիզիկական բռնության գործադրումն անխուսափելի է: Միայն անմիջական և անխուսափելի բռնության սպառնալիքն է, որ իր ազդեցությամբ կարող է հավասարվել իրական բռնության գործադրմանը և հիմք հանդիսանալ արարքը բռնաբարություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարում որակելու համար<sup>23</sup>:

Եթե բռնությունը կամ դրա գործադրման սպառնալիքը կիրառվել են սեռական ակտից կամ սեքսուալ բնույթի գործողություններից հետո, ապա դա չի առաջացնում բռնաբարության կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմ և ենթակա է առանձին քրեափրավական գնահատման:

Անօգնական վիճակի օգտագործումը համարվում է քննարկվող հանցատեսակների օբյեկտիվ կողմի դրսևորման երրորդ եղանակը: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138-ի չորրորդ մասում նշվում է. «Սույն օրենսգրքի 138-րդ և 139-րդ հոդվածների իմաստով անօգնական վիճակում գտնվող է համարվում այն անձը, որը որոշակի հանգամանքների ուժով մշտապես կամ ժամանակավորապես զրկված է եղել հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու կամ հասկանալու հնարավորությունից, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը»:

Լ. Ա. Անդրեանն նշում է, որ բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները պետք է համարել անօգնական վիճակն օգտագործելով կատարված նաև այն դեպքերում, երբ տուժողը տվյալ իրադրությունում զրկված է դիմադրելու հնարավորությունից: Որպես օրինակ՝ հեղինակը նշում է այն իրավիճակները, երբ խմբակային բռնաբարությունը կատարվում է մեկուսի վայրում և տուժողը, պայմանավորված վախի կամ սթրեսի ազդեցությամբ, գտնվում է ըն-

դարմացած վիճակում կամ գիտակցում է դիմադրելու անիմաստ լինելը<sup>24</sup>:

Այս տեսակետի հետ կարելի է համաձայնել, քանզի դիմադրության բացակայությունը միշտ չէ, որ վկայում է բռնաբարության կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերի բացակայության մասին: Հնարավոր են իրավիճակներ, երբ այդ դիմադրությունն ուղղակի անիմաստ լինի և վտանգի տուժողի կամ այլ անձանց կյանքը կամ առողջությունը: Ավելին՝ իրավիճակի առանձնահատկություններից ելնելով, կարող են չինչել նաև իրական սպառնալիքներ, սակայն տուժողը բավարար հիմքեր կունենա կարծելու, որ սեքսուալ ագրեսիային չենթարկվելը կարող է իրական վնաս հասցնել վերջինիս կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը: Նման իրավիճակը կարելի է բնութագրել որպես իրադրությանին անօգնական վիճակ, որը հաճախ կարող է հանդիպել հատկապես անչափահասների մոտ, ում հոգեկան և ֆիզիկական զարգացման մակարդակն էլ ավելի է սահմանափակում դիմադրելու ունակությունը:

Բռնաբարությունը տուժողի անօգնական վիճակի օգտագործմամբ կատարված որակելու համար նշանակություն չունի՝ կնոջը նման վիճակի է հասցրել ինքը՝ հանցավորը, թե նա արդեն իսկ անօգնական վիճակում է գտնվել<sup>25</sup>:

Նշենք նաև, որ անօգնական վիճակի օգտագործմամբ կատարված բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունն առկա է համարվում միայն այն դեպքերում, երբ հանցավորը գիտակցել է տուժողի՝ նման վիճակում գտնվելու հանգամանքն ու օգտվել դրանից:

ՀՀ քրեական օրենսդրության համաձայն՝ քննարկվող հանցատեսակների առումով անօգնական վիճակում գտնվող է համարվում նաև 12 տարին չլրացած անձը: Տարիքը՝ որպես սեռական բռնության ենթարկված անձի մոտ անօգնական վիճակի հատկանիշ, բազմիցս քննարկվել

է քրեական իրավունքի տեսության մեջ: Այս առումով հիմնական հարցադրումը հետևյալն է՝ ո՞ր տարիքն է, որ պետք է համարել մանկահասակության տարիք: Այս հարցը սկզբունքային է, քանզի նշված տարիքից ցածր անձանց հետ սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի գործողությունների կատարումը, անգամ վերջիններիս համաձայնությամբ՝ որակվում է որպես բռնաբարություն կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունների կատարում: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ նման համաձայնությունն իրավական ուժ չունի, քանզի տրվում է այն անձի կողմից, ով անկարող է ամբողջությամբ գիտակցել և հասկանալ իր նկատմամբ կատարվող գործողությունների բնույթն ու նշանակությունը: Եթե համաձայնությունը տրվում է այն անչափահասի կողմից, ով չի համարվում մանկահասակ, ապա քննարկվող հանցակազմերը բացակայում են:

Այսպիսով՝ հարկ է փաստել որ միանշանակ դրական պետք է գնահատել օրենսդրորեն այն տարիքի ֆիքսումը, որից ցածր տարիք ունեցողները համարվում են մանկահասակ:

Մեր օրենսդիրը կարծես՝ լուծել է այս հարցը՝ որպես տարիք սահմանելով՝ տասներկու տարեկանը, սակայն տեսության մեջ այս առումով միակարծությունը բացակայում է: Որոշ աղբյուրներում այդ տարիքը նշվում է տասնչորս տարեկանը<sup>26</sup>:

Պետք է դրական գնահատել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 138-ի 4-րդ մասում կատարված լրամշակումը (138-րդ հոդվածը փոփ. 23.05.11 ՀՕ-143-Ն, լրաց., խմբ. 12.11.13 ՀՕ-112-Ն): Սակայն, կարծում են, որ 12 տարեկանը նշելն այնքան էլ ճիշտ և հիմնավորված չէ: Առաջարկում են քննարկվող քրեաիրավական նորմում կատարել փոփոխություն և որպես «անօգնական վիճակի տարիք» սահմանել 14 տարեկանը: Պրակտիկայում բավական հաճախ անչափահասների

դեմ ուղղված բռնի սեռական հանցագործությունները կատարվում են 14 տարին չլրացած տուժողների նկատմամբ (տե՛ս քրեական գործեր N ՏԳ/0014/01/13, ՇԳ/0031/01/12 և այլն):

Իմ կարծիքով, տասնչորս տարին չլրացած անձանց ներքաշումը սեռական հարաբերությունների ոլորտ, անգամ վերջիններիս համաձայնությամբ, կարող է բացասական և անդառնալի հետևանքներ ունենալ նրանց ֆիզիկական, բարոյական և հոգեկան զարգացման վրա: Այս համատեքստում 14 տարին չլրացած անձը կարող է համարվել անօգնական վիճակում գտնվող: Սա բխում է նաև մեր ազգային առանձնահատկություններից, խառնվածքից և հայկական դաստիարակության յուրահատկություններից: Կարծում են տասներկու տարեկանը սահմանելով՝ մեր օրենսդրի կողմից հաշվի են առնվել արտասահմանյան սեքսուոգիական գրականությունում արտահայտված մոտեցումները, որոնք, մեր պարագայում, անընդունելի են:

Անչափահասի բռնաբարությունը՝ որպես ծանրացնող հանգամանք, նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածներ 138-ի և 139-ի երկրորդ մասի երրորդ կետով:

Անչափահաս ասելով՝ տվյալ դեպքում պետք է հասկանալ 14-ից 18 տարեկան անձանց: Արարքն անչափահասի բռնաբարություն որակելու համար անհրաժեշտ է, որ հանցավորը հաստատապես իմանա տուժողի 18 տարին լրացած չլինելու մասին, կամ էլ գիտակցի այդ հանգամանքը:

ՀՀ քր. օր.ի հոդվածներ 138-ի և 139-ի երրորդ մասերով նախատեսված են այս հանցատեսակների առավել վտանգավոր տեսակները, դրանք են՝ 1. տասնութ տարին չլրացած անձի նկատմամբ ծնողի կամ մանկավարժի կամ ուսումնական կամ բուժական կամ դաստիարակչական հաստատության աշխատակցի կամ այլ անձի կողմից, որի վրա դրված է նրա

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



դաստիարակության կամ խնամքի պարտականություն, 2. տասնչորս տարին չըրացած անձի նկատմամբ կատարելը:

Առաջին տեսակի հետ կապված հարկ է նկատել, որ այն նորամուծություն է մեր քրեական օրենսգրքում և օրենսգրքի նախնական տարբերակում բացակայում էր: Պետք է նշել, որ ողջունելի են համարում այս նորամուծությունը, քանզի նշված անձանց կողմից անչափահասի բռնաբարությունն օժտված է առավել մեծ հանրային վտանգավորությամբ: Սակայն, կարծում են, որ այս նորմը ենթակա է լրամշակման և այս նորմում հանցագործության սուբյեկտների շրջանակը պետք է ընդլայնվի: Մասնավորապես՝ բացի տուժողի ծնողներից պետք է ավելացվի նաև այլ ազգականների մասին դրույթը: Բացի այդ՝ պետք է նշել նաև այն անձանց, որոնցից անչափահաս տուժողը գտնվում է ծառայողական կամ աշխատանքային կախվածության մեջ: Պրակտիկայում քիչ չեն օրինակները, երբ բռնաբարությունը կամ սեքսուալ բնույթի բռնի գործողությունները կատարվում են ազգականների կողմից (տե՛ս օրինակ՝ քր. գործ ՇԳ/0001/01/12) և այս հանգամանքին պետք է տալ առանձին՝ ավելի խիստ քրեաիրավական գնահատական:

Այս դրույթի նախատեսումը համահունչ կլինի նաև միջազգային-իրավական կարգավորումներին: Մասնավորապես՝ Եվրոպայի Խորհրդի «Մեռական շահագործումից և սեռական բռնությունից երեխաներին պաշտպանելու մասին» Լանցարտտեի կոմվենցիայի Հոդված 28-ը սահմանում է. «Յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցառումներ ապահովելու համար, որպեսզի ստորև նշված հանգամանքները, եթե դրանք արդեն իսկ հանցագործության բաղկացուցիչ տարրեր չեն, համաձայն ներքին օրենսդրության համապատասխան դրույթների, դիտարկվեն որպես ծանրացուցիչ հանգամանքներ՝ սույն Կոմվեն-

ցիայով սահմանված իրավախախտումների համար պատիժը որոշելու ժամանակ.

ա) հանցագործությունը լուրջ վնաս է հասցրել տուժածի ֆիզիկական կամ մտավոր առողջությանը,

բ) հանցագործությանը նախորդել են կամ այն ուղեկցվել է խոշտանգումներով կամ կոպիտ բռնության դրսևորումներով,

գ) հանցագործությունը կատարվել է առանձնապես անպաշտպան զոհի նկատմամբ,

դ) հանցագործությունը կատարվել է ընտանիքի անդամի, երեխայի հետ ապրող անձի կամ իր պաշտոնը չարաշահած անձի կողմից,

ե) հանցագործությունը կատարվել է մի քանի անձանց կողմից, ովքեր գործել են համատեղ,

զ) հանցագործությունը կատարվել է կազմակերպված հանցագործ խմբի կողմից,

է) հանցագործությունը կատարած անձը նախկինում դատված է եղել համանման հանցագործություններ կատարելու համար»:

Ինչպես տեսնում ենք՝ «դ)» կետով նշում կա նաև իր պաշտոնը չարաշահած անձանց մասին և ծանրացնող հանգամանքը լրամշակելու իմ առաջարկած տարբերակը, կարծում են, համահունչ է այս կարգավորմանը և անգամ ընդլայնում է այն անձանց շրջանակը, ովքեր անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործության պարագայում պետք է ավելի խիստ պատժվեն:

Հաջորդ ծանրացնող հանգամանքի պարագայում անհրաժեշտ է բացահայտել, որ հանցավորը գիտակցել է տուժողի մանկահասակության (14 տարին լրացած չլինելու) հանգամանքը:

Ինչ վերաբերում է անառակաբարո գործողությունների հանցատեսակին, ապա քրեական իրավունքի տեսության մեջ այս հանցատեսակն ընդունված չէ քննարկել անչափահասների դեմ



ուղղված բռնի սեռական հանցագործությունների համատեքստում: Սակայն հայրենական քրեական օրենսդրության առանձնահատկություններից պետք է համարել այն, որ բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով զուգորդված անառակաբարո գործողությունների կատարումը նախատեսված է որպես քննարկվող հանցագործության ծանրացնող հանգամանք: Հետևաբար՝ անառակաբարո գործողությունները, զոնե այս որակյալ տեսակի շրջանակում, պետք է քննարկել որպես անչափահասների դեմ ուղղված բռնի սեռական հանցագործություն: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 142-ը պատասխանատվություն է սահմանում անառակաբարո գործողություններ կատարելու համար: Հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Տասնութ տարին լրացած անձի կողմից ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի նկատմամբ կամ տասնվեց տարին լրացած անձի կողմից տասնչորս տարին չլրացած անձի նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելը»: Խիստ բացասաբար ազդելով երեխաների հոգեբանության վրա՝ վտանգավոր այս արարքը կարող է նրանց մղել սեռական այլասերվածության:

Ինչպես տեսնում ենք, գործող քրեական օրենքը չի տալիս անառակաբարո գործողությունների հասկացությունը, դրանց դրսևորման եղանակները ինչն այնքան էլ համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին: Այս առումով ողջունելի է ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի մտեցումը, որտեղ հոդված 196-ով պատասխանատվություն է սահմանվել անառակաբարո արարք կատարելու համար և տրվել են այդ արարքին բնորոշ հատկանիշները: Նշված հոդվածի առաջին մասն ունի հետևյալ բովանդակությունը՝ «Անձի կողմից պոռնկագրական նյութ կամ առարկա, այդ թվում՝ տպագիր հրատարակություն, կինոյի կամ

տեսաֆիլմերի նյութ, էլեկտրոնային կրիչների վրա պահվող նյութ, պատկեր կամ պոռնկագրական բնույթի այլ առարկա անչափահասների շրջանում տարածելը, անչափահասին ցուցադրելը, անչափահասի ներկայությամբ սեռական հարաբերությունը, մերկանալը կամ սեքսուալ բնույթի այլ գործողություն կատարելը կամ անչափահասի մեջ սեքսուալ բնույթի ցանկություն առաջացնելուն ուղղված այլ արարքները, եթե բացակայում են սույն օրենսգրքի հոդվածներ 193-ով և 194-ով նախատեսված հանցագործությունների հատկանիշները...»:

Տարօրինակ է, որ անօգնական վիճակն օգտագործելով՝ անառակաբարո գործողությունների կատարումը ներառված չէ այս հանցագործության որակյալ տեսակների շրջանակում: Իհարկե, որպես առավել ծանրացնող հանգամանք նախատեսված է տասներկու տարին չլրացած անձի նկատմամբ կատարելը, սակայն անչափահասի մոտ անօգնական վիճակի առկայությունը կարող է պայմանավորված լինել ոչ միայն որոշակի տարիքի հասած չլինելու հանգամանքով, այլ նաև ուրիշ գործոններով (օրինակ՝ երեխայի հաշմանդամություն, կոմատոզ վիճակներ և այլն): Կարծում եմ, անօգնական վիճակի օգտագործումը ևս պետք է նախատեսել որպես անառակաբարո գործողությունների ծանրացնող հանգամանք, և հոդված 142-ի 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը, որը կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»:

Բացի այդ, կարծում եմ, անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսել բռնի անառակաբարո արարք կատարելու հանցակազմը: Կարծում եմ, բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով, ինչպես նաև տուժողի



անօգնական վիճակն օգտագործելով՝ անառակաբար գործողություններ կարող են կատարվել մաս չափահասների նկատմամբ, մինչդեռ առկա իրավակարգավորման պարագայում այդ արարքներից չի տրվում քրեաիրավական գնահատական: Առաջարկում են հետևյալ խմբագրությամբ նոր հանցակազմ նախատեսել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխում (Մեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություններ)՝ «Անառակաբար արարքի կատարումը, որը չի գուցորդվել տուժողի մարմնի մեջ սեռական ներթափանցմամբ և կատարվել է տուժ-

ղի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով...»: Ընդ որում՝ այս հանցատեսակի համար պետք է սահմանել նույն որակյալ տեսակները, որոնք առկա են բռնաբարության և սեքսուալ բնույթի բռնի գործողությունների հանցակազմերում:

Կարծում են, որ այս հանցատեսակի համար նախատեսված պատժատեսակները և պատժաչափերը պետք է գրեթե նույնական լինեն սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար նախատեսված պատժամիջոցներով:

<sup>1</sup> См.: Уголовное право Российской Федерации (Общая часть), Учебник, Под ред. А.И. Марцева, Омск, 1998, с. 97.

<sup>2</sup> См.: Таганцев Н.С., Русское уголовное право, Часть Общая, Т. 1. Тула, 2001, с. 494.

<sup>3</sup> Российское уголовное право, Общая часть, Учебник, М., 1997, с. 98.

<sup>4</sup> См.: Красиков А.Н., Преступления против личности, Учебное пособие, Саратов, 1999.

<sup>5</sup> Общая сексопатология, М., 1997, с. 165.

<sup>6</sup> Авдеев М.И., Судебно-медицинская экспертиза живых лиц, М., 1968, с. 287.

<sup>7</sup> Տե՛ս օր.՝ Авдеев М.И., Судебная медицина, М., 1960; Кон И.С., Введение в сексологию, М., 1989; Нохуров А., Нарушение сексуального поведения, М., 1988; Общая сексопатология, М., 1977.

<sup>8</sup> Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ իրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) /Երևանի պետ. համալս. -Եր.: ԵՊՀ իրատ., 2012, էջ 238:

<sup>9</sup> См.: Красиков А.Н., Преступления против личности, Учебное пособие, Саратов, 1999, с. 143.

<sup>10</sup> См.: Затона Р.Е., Уголовно-правовой и криминологический аспекты ответственности за половое сношение и иные действия сексуального характера с лицом, не достигшим четырнадцатилетнего возраста, Дисс... канд. юрид. наук, Саратов, 2000, с. 45-46.

<sup>11</sup> См.: Кон И.С., Введение в сексологию, М., 1988; Крафт-Эбигг Р. Половая психопатия, с обращением особого внимания на извращение полового чувства, М., 1996; Общая сексопатология, М., 1997; Старович З, Судебная сексология, М., 1991.

<sup>12</sup> Меркурьев В.В., Некоторые вопросы квалификации сексуальных преступлений // Следователь, 2001, №5, с. 7-8.

<sup>13</sup> Уголовное право, Особенная часть, Под ред. В.Н. Петрашева, М., 1999, с. 93-94.

<sup>14</sup> Изотов Н.Н., Уголовная ответственность за насильственные действия сексуального характера, Автореф. дисс.... канд. юрид. наук, Ставрополь, 2000.

<sup>15</sup> datalex.am Դատական Գործ N: ԵՄԴ՝0063/01/14

<sup>16</sup> См.: Кибальник А., Соломонович И., Насильственные действия сексуального характера // Российская юстиция, 2001, №8, с. 64.

<sup>17</sup> Словарь по уголовному праву, Под ред. А.В. Наумова, М., 1997, с. 245.

<sup>18</sup> Иващенко А.В., Марцев А.И., Методология правового исследования насилия // Социально-правовые проблемы борьбы с пассивностью, Омск, 1996, с. 4.

<sup>19</sup> Newton.G. What is violence// The Nation. N.Y., 1988. P. 821.

<sup>20</sup> Տե՛ս С.В. Аракелян, Преступное насилие, Ер. 2013, էջ 262:

<sup>21</sup> См.: Наумов А.В., Практика применения Уголовного кодекса Российской Федерации: комментарий судебной практики и доктринальное толкование, - Волтерс Клувер, 2005, с. 262.

<sup>22</sup> Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս (վեցերորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով) / Երևանի պետ. համալս. - Եր.: ԵՊՀ իրատ., 2012, էջ 228:

<sup>23</sup> Андреева Л.А., Состав преступления изнасилования в советском уголовном праве: Авто- реф. дисс... канд. юрид. наук, Л., 1962, с. 7; Она же. О характере принуждения при изнасиловании // Правоведение, 1960, №2, с. 153-158.

<sup>24</sup> Андреева Л.А., Состав преступления изнасилования в советском уголовном праве: Авто- реф. дисс... канд. юрид. наук, с. 7-8.

<sup>25</sup> См.: Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под ред. Ю.И. Скуратова, В.М. Лебедева, М., 2001, с. 302.

<sup>26</sup> См.: Красшок Г.П. Ненасильственные сексуальные посягательства на лиц, не достигших четырнадцатилетнего возраста: Дисс... канд. юрид. наук, Краснодар, 2000, с. 53.



## RESUME - РЕЗЮМЕ

### SOME PROBLEM ASPECTS OF THE OBJECTIVE SIDE OF VIOLENT SEXUAL CRIMES AGAINST MINORS

Edgar Karpetyan

*PhD Student at the Chair of Criminal Law, YSU*

The objective side of violent sexual crimes against minors in the theory of criminal law is one of the most complex and controversial. The range of doctrinal opinions on this issue is diverse and contradictory. The article analyzes various doctrinal interpretations of the objective side of violent sexual crimes against minors, studied some problematic aspects of rape, violent sexual acts against minors, and violent depraved acts. On the basis of the study, it is proposed to make some changes in the Criminal Code of Republic of Armenia.

**Key words:** *Violent sexual crimes against minors, the objective side of the crime, rape of minors, violent sexual acts against minors, violent depraved acts, sexual penetration, helpless state.*

### НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМНЫЕ АСПЕКТЫ ОБЪЕКТИВНОЙ СТОРОНЫ НАСИЛЬСТВЕННЫХ ПОЛОВЫХ ПРЕСТУПЛЕНИЙ ПРОТИВ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ

Эдгар Карапетян

*Соискатель кафедры уголовного права ЕГУ*

Объективная сторона насильственных половых преступлений против несовершеннолетних в теории уголовного права является одной из наиболее сложных и дискуссионных тем. Спектр доктринальных мнений по этому вопросу многообразен и противоречив. В данной статье проанализированы различные доктринальные толкования объективной стороны насильственных половых преступлений против несовершеннолетних, изучены некоторые проблемные аспекты изнасилования, насильственных действий сексуального характера против несовершеннолетних, а также насильственных развратных действий. На основе исследования нами предлагается внести изменения в УК РА.

**Ключевые слова:** *насильственные половые преступления против несовершеннолетних, объективная сторона преступления, изнасилования несовершеннолетних, насильственные действия сексуального характера против несовершеннолетних, насильственные развратные действия, сексуальное проникновение, беспомощное состояние.*

**Բանալի բառեր -** *Անչափահասների նկատմամբ կատարվող բռնի սեռական հանցագործություններ, հանցագործության օբյեկտիվ կողմ, անչափահասի բռնաբարություն, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ անչափահասի դեմ, բռնի անսեռապարտ գործողություններ, սեռական ներթափանցում, անօգնական վիճակ:*

ՀՆԻԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2018 7 - 8 (229-230)

ԴԱՏԱԿԱՆ Իշխանություն